ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 21/12

Քաղ. Երեւան **27 նոյեմբերի**

2012թ.Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա. Ի. Ղարիբջանյան (քարտուղար) Ա. Հ. Աբգարյան իր 2011թ. նոյեմբերի 27-ի նիստում քննարկեց «Ն. Վ. Սումաթրա Թբեքոու Թրեյդինգ Քամփնի» ընկերության ներկայացուցիչ Ա. Նահապետյանի կողմից 2011թ. հունիսի 1-ին «JET STAR» (հայտի համարը N 20090679) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու քննարկելու մասին» կարգի 88-րդ կետի 1-ին ենթակետը, 106-րդ կետի 1-ին մասի «ա» ենթակետը, 107-րդ կետի 1-ին ենթակետը, համաձայն որոնց, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնիշվող ապրանքների և(կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հասնրության մոտ շփոթության առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը:

Նշված է նաև, որ «JET STAR» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է «STAR» (Standart Tobacco Incorporated LTD, 3076 Sir Francis Drakes's Haghway, P.O. Box 3463, Road Town, British Virgin islands N7318, 7319) ապրանքային նշանին, հայտարկված «JET STAR» ապրանքային նշանի «STAR» բառը շփոթելու աստիճան նման են «STAR» ապրանքային նշանին, բացի այդ համընկնող տարրերն առանձին իմաստ ունեն և որոնց վրա ընկնում է տրամաբանական շեշտը:

Բողոքում ներկայացված է հայտատուի «JET STAR» և հակադրված «FULL ST R AMERICAN BLEND» և «LIGHT ST R AMERICAN BLEND» ապրանքային նշանները շփոթության աստիճանի

իրար նման չեն, և դրանց ընկալումը սպառողի կողմից բոլորովին տարբեր է համեմատության երեք սկզբունքների տեսակետից:

Բողոքարկողը նշում է, որ «JET STAR» նշանը համակցված է և նշանի համակցված լինելը շատ արտասովոր ձևով է արտահայտվում: «JET STAR» բառերը համակցվում են միակ պատկերային տարր հանդիսացող հնգաձև աստղի հետ, ընդ որում միայն «STAR» բառի «A» տառի հատվածում՝ օժտելով այն արտասովոր ընկալմամբ և կարծես էլ ավելի շեշտելով «STAR» բառի «աստղ» իմաստը: Նշանը կատարված է սև, բեժ, նարնջագույն գունային համակցությամբ և ոճավորված մեծատառերով:

Բողոքում նշված է, որ իմաստային տեսակետից հայտատուի «JET STAR» նշանը անգլերենից թարգմանաբար նշանակում է «ռեակտիվ աստղ», իսկ հակադրված նշանները լիակատար, ամերիկյան խառնուրդ (գր. N 7318) և թեթև ամերիկյան խառնուրդ (գր. N 7319), իսկ «S» և «T» տառերը իրենից ներկայացնում են սեփականատիրոջ արտադրող ընկերության Standart Tobacco Incorporated LTD անվանման, առաջին երկու մասերի Standart և Tobacco, սկզբնատառերը: Այդ նշաններում չկա «STAR» բառը, «S», «T» և «R» տառերի միջև կա ընդամենը աստղի պատկեր և հայ սպառողը այս ապրանքային նշաններով մակնիշված ապրանքը գնելիս կխնդրի «STAR» ծխախոտային արտադրանքը, այլ ոչ թե «STAR»:

Բողոքում նշված է, որ «Ն. Վ. Սումաթրա Թբեքոու Թրեյդինգ Քամփնի» ընկերությունը դատավարական գործընթաց է սկսել «Սթենդարդ Թբեքոու Ինքորփորեյթիդ Լթդ» ընկերության N 7318 «FULL ST R AMERICAN BLEND» և N 7319 «LIGHT ST R AMERICAN BLEND» ապրանքային նշանների գրանցումները չօգտագործման պատճառով չեղյալ ճանաչելու նպատակով:

2011թ. հոկտեմբերի 17-ի նիստում բողոքարկման խորհուրդը գործի քննարկումը հետաձգել էր մինչև դատական վճռի կայացումը:

2012թ. հոկտեմբերի 4-ին վարչական դատարանի կողմից կայացվել է վճիռ, համաձայն որի 7318 «FULL ST R AMERICAN BLEND» և N 7319 «LIGHT ST R AMERICAN BLEND» ապրանքային նշանները «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված 5 տարվա ժամկետում երրորդ անձ Ստանդարտ Թբեքոու Ինքորփորեյթիդ ԼԹԴ ընկերության կողմից չօգտագործելու իրավահարաբերության առկայության պատճառով վերացնել այդ ապրանքային նշանների գրանցումները որպես հետևանք՝ երրորդ անձի կողմից այդ նշանները 5 տարվա ընթացքում չօգտագործելու պատճառով չեղյալ ճանաչելու միջոցով:

Վճիռը ուժի մեջ է մտել 2012թ. նոյեմբերի 6-ին: Կոլեգիան, հիմք ընդունելով վերոհիշյալը, առաջարկեց բողոքը բավարարել:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 13.04.2010թ. և կրկնական փորձաքննության՝ 02.03.2011թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել «Ն. Վ. Սումաթրա Թբեքոու Թրեյդինգ Քամփնի» ՍՊԸ-ի ««JET STAR» (հայտի համարը N 20090679) ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան